պէս մի առանձնաշնորհութիւն, տոած էր նրանց տոհմին: Այս պատճառով այդ տոհմը կոչում էին «զառաբիներ»:

Ալօն մեր ամենաանպիտան աշակերտներից մէկն էր, ոչ ոք չէր սիրում նրան, բացի վարժապետից: Երբ պատահում էր աշակերտներից մէկին պատժել, Ալօն առաջինն էր լինում, որ խնդրում էր վարժապետից իրան թոյլ տալ կատարելու դահճի պաշտօնը: Ծեծել իր ընկերներին, նահատակել նրանց, — դա զոարճութիւն էր պատճառում անսիրտ Ալօին, եւ մեր վարժապետը երբեք չէր զրկում նրան այդ ուրախութիւնից... Ամէն օր կը գար նա դպրոց, մի նոր գիրք իր հետ բերելով, ցոյց կը տար վարժապետին ու կ'ասէր. «հա՛յրս ասաց, որ այս գրքից դաս տաք»: — «լաւ» — կը պատասխանէր վարժապետը, — «դրայ վրայ կարդայ»:

Մի անգամ ես չկարողացայ համբերել, ասեցի Ալօին.

— Դու մի կանոն Սաղմոսը դեռ հեգելով ես կարդում, այդ մեծ գիրքը ո՞նց պիտի կարդաս:

— Իմ հայրն էլ մեծ մարդ է, — պատասխանեց նա մի առանձին հպարտութեամբ:

— Քո հայրը մեծ մարդ է, այդ ես իմանում եմ, բայց որդին մեծ գիրք կարդալու համար պէտք է դեռեւս մի քանի տարի սովորէ:

— Ինչ՞ պիտի սովորեմ... հայրս ասաց, տար այդ գիրքը կարդայ, որ դպրոցի մէջ առաջին աշակերտը լինես:

— Որպէս ինքը քաղաքի մէջ առաջին մարդն է, — պատասխանեցի ես ծիծաղելով:

Այդ միջոցին զգացի ապտակի մի սաստիկ հարուած երեսիս վրայ: Ես էլ պատասխանեցի նրան իմ զօրեղ մուշտիով: Անպիտանը իսկոյն վազեց վարժապետի մօտ եւ ինձ վրայ գանգատուեց: Ձեզ եմ թողնում երեւակայել այն անտանելի պատիժը, որ ես ստացայ իմ յանդգնութեան համար, ես համարձակուել էի իմ մուշտիով պատասխանել արքունի փողերանոցի գլխաւորի որդուն... այդ անկարելի բան էր: Բայց այն օրից իմ մէջ ծագեց մի սաստիկ ատելութիւն դէպի ամէն ինչ, որ արքունական էր եւ դէպի ամէն մարդ, որ հարստացել էր արքունիքի շնորհիւ...

Հարուստների որդիների նախապատուութիւնը դպրոցի մէջ առանց պատճառի չէր. նրանք տօն օրերում վարժապետի համար ընծաներ էին բերում գինի, արաղ, իւղ, պանիր եւ դրանց նման բաներ: Նրանց հայրերը վարժապետին «խալաթ» էին տալիս, երբ որդիները մի գրքի կարդալը վերջացնում էին եւ սկսում էին միւսը: Բայց ես աղքատ էի. մայրս դժուարութեամբ